

կարենան վայելել ի նմա տասը տարուան ուսմանց պտուղը, ու պիտի ճանցնան ու յարգեն ըստ արժանայն իւր հայրենասիրութիւնը՝ որով ընտրեց ու առաւ դոնարին՝ բայց եւ օգտակար փիճակ մը հայրենակցաց ծառայելու, ու հայրենեաց պիտանի անդամ մը ըլլալու :

ses dix années d'études, ils reconnaîtront et estimeront le patriotisme qui l'a porté à embrasser une profession difficile il est vrai, mais qui lui permet de rendre des services à ses compatriotes et d'être un membre utile à notre commune patrie.

S. ՄՍԵՐ ՄՍԵՐԵԱՆՅ. — Արժանապատիւ եւ գիտնական պարոն Մսերն Մսերեանց Զմիռնացի, որ Մոսկուայի Լազարեանց ճեմարանին մէջ հայկարանութեան եւ կրօնական ուսմանց դասատու է, փետրուարի Տին Ռուսաց օգոստոսի Կայսրէն վարձատրուելու Եւսպետական նշանաւ սրբոյն Սրանիսայայ կարգին երկրորդ աստիճանի ի փոխարեն Վարձապետական իւր ժրջան ծառայութեանցը :

(ԱՐՇԱՅԱՅ.)

ՎԱՐԳԱՆ ՓԱՇԱ. — ԵԱԻԼՐ ՓԱՇԱ. — ԱՌԱՔԵԼ ՓԱՇԱ. — Պօլսոյ բղբակիցներնէս մեծ ուրախութեամբ լսեցինք որ Օսմա-

նեան պետութիւնը բարենաճելու Բաշայուրեան փառաւոր պատուանունը ընծայել վեմափայլ Յովսէփ Վարդանեան ու Թեկրեան Անտոն Եսաւր Պէլերուն, որ արդ Վարդան Բաշա եւ Եսաւր Բաշա իշխանական անուններուն արժանացան :

Արդէն ուրիշ անգամ Յրագրիս մէջ աւետեցինք ուրախութեամբ՝ ազգայնոց մէջէն անդրանիկ Բաշա Նուպարեան Առաքել Պէլին փառաւորութիւնը ոչ միայն փաշայութեամբ, հապա նաեւ Սուտան աշխարհին կուսակալութիւնն ալ մեծապանծ փառօք եւ իմաստութեամբ ընդունին ու ցարդ կառավարելը :

ԿԵՆՅԱՂՕԳՈՒՏ ԲԱՆՔ

ՊԱՐՏԲ ԱՌ ԼԱՅՐԵՆԻՍ.

Ա.

Մնողքնիս, զաւակնիս, ազգականնիս ու բարեկամնիս կսիրեմք. բոլոր մեր այս սիրելիքը հայրենիք տուել է մեզ, եւ իւր ծոցը կրակեցընէ զանոնք. ուրեմն ճիշտօք պէտք է սիրեմք այս Հայրենիք ըստած օրհնեալ երկիրն ու իրեն համար ամեն զոն աչքերնուս բերել ու փոքր երեւայ :

...

Ո՞րպէս կարող եմք չնուիրել հայրենեաց բոլոր մեր ստացուածքը, երբ մտածեմք որ ամեն ունեցածնիս իրմէ առած եմք :

ԿԻԿԵՐՈՆ.

Միտքդ բեր միշտ որ հայրենիք անտնօրինելի եւ սրբազան իրաւունք ունի հանճարոյդ, առաքինութեանդ, զգացմանցդ եւ բոլոր գործոցդ. ինչ փիճակի մէջ ալ որ զանուիս, պահապան գիտութիւն մի եւ հայրենեաց, եւ պարտքդ է միշտ անոր վրայ հսկել. եւ որ եւ իցէ վտանգի ժամանակ անոր օգնութեան վազել :

ՊԱՐԹԵԼԻՄԻ.

Հայրենեաց համար մեռնիլք քաղցր ու փառաւոր բախտ է :

ԲԲՍՏԻՈՍ.

Որ տարակուսի մեռանել վասն հայրենեաց՝ այդ վատամտն է միշտ :

ՍԱՐԳԻՍ Վ. ԹԵՂՈԳՈՐԵԱՆ.

Հայրենեաց ծառայելու ժամանակ պէտք է որ բոլոր մեր անձնական ըշխմութիւններն՝ կրքերն ու վրեժխնդրութիւնները դադրին, առանձնական սերն ու գորովը լռեն. մարդս պիտի ոչնչանայ, եւ քաղաքացին միայն պիտի մնայ բոլորանուէր հայրենեաց :

...

Քաղաքական կիրք յայնժամ եւեթ օրինաւորք են, յորժամ

հայրենասիրութիւնն վառարան է նոցին. բայց բազում անգամ ի վեճս կուսակցութեան դուռն ուրեք զօգուտ աշխարհին խորհին մարդիկ :

Ս. Վ. ԹԵՂՈԳՈՐԵԱՆ.

Հայրենեաց դեմ բարկանալը մեծ յանցանք է :

ԿԻԿԵՐՈՆ.

Ամեն անգամ որ մեկը հայրենեացը դեմ կպատերազմի՝ բնութեան դեմ կգործէ :

ՖԵՆԵԼՈՆ.

Հայրենեաց օգտին համար չկայ անձնական շահ մը որ առաքինի քաղաքացին չկարենայ զոնել :

...

Որպէս զի հայրենիք երջանիկ ըլլայ, պէտք է որ իշխանք եւ զատաւորք օրինաց հնազանդին, քաղաքացիք եւ իշխանաց եւ զատաւորաց :

ՍՈՂՈՆ.

Պատմեցէք մանկանցդ զերբեմն փառսն եւ զամենան հանգամանս հայրենեաց ձերոց, զի մատաղ սիրտ նոցա զուարճացեալ եւ զգածալ միանգամայն զեղեցիկ եւ տխուր յիշատակօք գիտացեն քեզինն ունին առնել նմա ի պարտուց իւրեանց եւ իրաւանց ժառանգութեան :

Ս. Վ. ԹԵՂՈԳՈՐԵԱՆ.

Մի հարցընէր քեզինք է քու պարտքդ առ Հայրենիս : Սիրէ ու կառնիր :

...

Իշխան եւ հայրենեացը իշխել գիտցիր. զնուծր, հայրենեացը համար մեռնիլ աչքդ առ. քաղաքացի, հայրենեացը ծառայել մտածէ. արուեստաւոր, հայրենեացը ճարտարութիւնը քա-